

ՀՀ Արարատի մարզ քաղաք Մասիս

Մասիս համայնքի 2006թ. բյուջե

Ըստ աշխատանքի արդյունքների

Համայնքի ղեկավար՝

Սաշա Հակոբյան

Գլխավոր ֆինանսիստ՝

Լյովա Գրիգորյան



Սույն ձեռնարկը պատրաստվել է Միավորված ազգերի զարգացման ծրագրի «Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում» նախաձեռնության շրջանակներում:

Համայնքի ղեկավարի ուղերձը

Հայաստանում համայնքային կառավարման համակարգի ներդրման նախնական փուլը կարելի է ասել հանգում է իր տրամաբանական ավարտին: Այժմ արդեն կառավարման ապակենտրոնացման քաղաքականության համատեքստում կարևորվում է ՏԻՄ-երի առավել հզորացումը, որը նախ և առաջ ենթադրում է իրավունքների և պատասխանատվության ստանձման կարողություն ինչպես տեղական ինքնակառավարման մարմնի, այնպես էլ համայնքի յուրաքանչյուր բնակչի կողմից: Իսկ սա նշանակում է կառավարման կարողությունների հզորացում և որոշումների կայացման գործընթացում համայնքի մասնակցության ապահովում, որոնց արդյունքում միայն իրականություն կդառնա համայնքային բարօրության և հզորության համընդհանուր նպատակը:

Առաջարկվող բյուջեն, որը ձևավորվել է բյուջետավարման նոր մոդելի կիրառմամբ, հիմքում պարունակում է համայնքի ֆինանսական կառավարման հաշվետվողականության և չափելիության, ինչպես նաև ծախսերի արդյունավետության և նպատակայնության բարձրացման սկզբունքներ:

Սա աշխատանքների ու ծախսերի պլանավորման օրինակելի մոդել է, որը հնարավորություն է տալիս առկա ռեսուրսների և հնարավորությունների ճիշտ գնահատմամբ և ծախսերի առաջնահերթությունների հստակ սահմանմամբ ապահովել քաղաքի զարգացման օպտիմալ ճանապարհ:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է իրավիճակի ռեալ գնահատումից և ծախսերի առաջնահերթություններից ծնված իրատեսական մի նախագիծ, որը առկա և աճի միտում ունեցող ֆինանսական ռեսուրսները արդյունավետ տնօրինելու, հստակ վերահսկելու ճանապարհով կհանգեցնի համայնքի ցանկալի զարգացմանը:

Բյուջեի եկամտային մասը կանխատեսվում է ապահովել սեփական եկամուտների հավաքագրման և պետական դոտացիայի ստացման արդյունքում: Առաջադրված տարեկան խնդիրների մի մասը նախատեսվում է լուծել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:

Բյուջեի ծախսային մասը ուղղված է հիմնականում ծառայությունների մատուցման առկա որակի և քանակի պահպանմանը և որոշակի մասով նաև համայնքային ենթակառուցվածքների, բնակֆոնդի, ծառայությունների մատուցման առկա մակարդակի զարգացմանը:

Հուսով եմ, որ նաև ձեր բոլորի աջակցությամբ տարեվերջում կունենանք արդյունավետ կատարված բյուջե և անցյալում թողնված բազում համայնքային խնդիրներ:

Քաղաքապետ՝

Ս. Հակոբյան

**Համայնքապետարանի առաքելությունը և ռազմավարական
նպատակը**

Առաքելություն

Մասիսի քաղաքապետարանի առաքելությունը իր լիազորությունների շրջանակներում համայնքի զարգացման արդյունավետ կառավարումն է ի շահ յուրաքանչյուրի և բոլորի:

Ռազմավարական նպատակ

Մասիսի քաղաքային համայնքի տնտեսական, սոցիալական, մշակութային, մարդկային ռեսուրսների և էկոլոգիական միջավայրների բարելավմամբ ապահովել քաղաքի կայուն զարգացում և բարգավաճում:

Համայնքի իրավիճակի վերլուծություն, առկա ռեսուրսների գնահատում ու կանխատեսում

Ա. 2005 թվականի գործունեության համառոտ նկարագիր

2005 թվականը կարելի է համարել բեկումնային: Խոսքը առաջին հերթին վերաբերում է սեփական եկամուտների շոշափելի աճին, աջակից կազմակերպությունների հետ համագործակցության որակական նոր աստիճանի ձևավորմանը և քաղաքի ենթաառուցվածքների բարելավմանն ուղղված ծախսերի կտրուկ մեծացմանը:

1. Եկամուտների աճ

Վերջին տարիներին դիտվում է սեփական եկամուտների կայուն աճ: Թեև այս ուղղությամբ դեռ անելիքները շատ են, սակայն միտումը հուսադրող է: Ստորև ներկայացված է 2004-2005 թվականների համեմատականը:

Մասիս քաղաքային համայնքի 2005 թվականի բյուջեի մուտքերի ամփոփ

Դ/Դ	Անվանում	հազ. դրամ			Կատ. %
		2004թ 12 ամսվա փաստ	2005թ 12 ամսվա առաջադր	2005թ 12 ամսվա փաստ	
Հարկային եկամուտներ					
1	<i>ա/հողի հարկ , այդ թվում`</i>	<i>8671.3</i>	<i>14000.0</i>	<i>9643.6</i>	<i>68.9</i>
	գյուղ. նշանակ. հողեր	5403.1	10000.0	7044.4	70.4
	ոչ գյուղ. նշանակ. հողեր	3268.2	4000.0	2599.2	65.0
	<i>բ/ գույքահարկ, այդ թվում`</i>	<i>18717.7</i>	<i>33887.0</i>	<i>30046.9</i>	<i>88.7</i>
	իրավ. անձանցից	7347.4	13670.0	13398.4	98.0
	ֆիզիկական անձանցից	11370.3	20217.0	16648.5	82.3
	<i>գ/ պետական տուրքեր</i>	<i>9834.1</i>	<i>11800.0</i>	<i>10850.7</i>	<i>92.0</i>
	<i>դ/ տեղական տուրքեր, այդ թվում`</i>	<i>1940.0</i>	<i>2000.0</i>	<i>3934.5</i>	<i>196.7</i>
	Առևտրի բաժնով		1200.0	1122.5	93.5
	Ճարտարապետական բաժնով		800.0	2812.0	351.5
Ոչ հարկային եկամուտներ					
2	<i>ա/ Վարձով տրվող հողեր</i>	<i>3934.1</i>	<i>7730.0</i>	<i>7474.8</i>	<i>96.7</i>
	1.գյուղնշանակության	1801.2	2200.0	2206.8	100.3

	2.ոչ գյուղնշանակության	2132.9	5530.0	5268	95.3
	<i>բ/առանց պետ.տուրքի մատ ծառայ. վճարներ</i>		12000.0	10718.2	89.3
	<i>գ/ այլ մուտքեր</i>	18151.2	7848	12771.2	162.7
	<i>դ/ շենքի վարձակալություն ե/ տեղական վճարներ</i>	1954.4	2000.0	1726.2	86.3
		1035.0	50.0	976.0	195.2
3	<i>Դոտացիա</i>	82050.2	102840.8	102840.8	100.0
4	<i>Սուբվենցիա</i>		50000.0	50000.0	100.0
5	<i>Աճուրդային մուտքեր</i>	16095.0	5100.0	1769.4	34.7
6	<i>Մնացորդը տարվա սկզբին</i>	523.5	2940.3	2940.3	100.0
7	<i>Պատվիրակված լիազ.</i>	1796.7	1870.9	1870.6	100.0
	Ընդամենը	164703.2	254067.0	247563.2	97.4
	Ընդամենը առանց դոտացիա և սուբվենցիա	82653.0	101226.2	94722.4	93.6
	Ընդամենը առանց տարեսկզբի մնացորդի. պատվիր. լիազոր.-ի. դոտ.-ի և սուբ.-ի	80332.8	96415.0	89911.5	93.3
	Ընդամենը առանց ֆոնդային բյուջեի	64237.8	91315.0	88142.0	96.5

2. Աջակից կազմակերպություններ/ Ծրագրեր 2005 թ.

1. ՄԱԿ / UNDP «Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում»
2. ՄԱԿ/ «Համայնքային էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում»
3. ՄԱԿ/ UNICEF «Հաշմանդամ երեխաների օգնության համայնքային ցերեկային կենտրոն»
4. «Եվրասիա» հիմնադրամ/ «Միջհամայնքային համագործակցության խթանում»
5. TACIS/ REDAM «Ինֆորմացիոն-վերլուծական կենտրոն»
6. «Առաքելություն Հայաստան»/ «Բարեգործական ճաշարան»
7. «Փրկեք երեխաներին»/ «Հանրակացարանների վերանորոգում»
8. «Հայաստան ծառատունկ»/ «Գարնանային ծառատունկ»

3. Ենթակառուցվածքների պահպանմանը և բարելավմանը ուղղված ծախսեր

Եկամուտների աճին զուգահեռ, բնականաբար, տարեցտարի աճում են քաղաքում համայնքի կողմից իրականացվող ծախսերը: Ենթակառուցվածքների պահպանման հետ մեկտեղ 2005 թվականին որոշ աշխատանքներ են կատարվել նաև զարգացման ուղղությամբ, ինչը լինելու է հետագա տարիների ռազմավարության առանցքը, որովհետև վերականգնողական մասնակի ծախսերը տարիների կտրվածքով շատ ավելի թանկ են նստում համայնքի սուղ բյուջեի վրա:

Ենթակառուցվածքների պահպանմանը և բարելավմանը ուղղված ծախսեր

N	Ծախսատեսակ	Գումար, դր.
Ա	Կրթություն, որից՝	56 626 000
1	Մանկապարտեզներ	50 586 000
2	Մանկապատանեկան կենտրոն	6 040 000
Բ	Մշակույթ և սպորտ, որից՝	32 500 000
1	Գրադարան	7 100 000
2	Երաժշտական դպրոց	16 000 000
3	Գեղարվեստի դպրոց	3 200 000
4	Մարզադպրոց	6 200 000
Գ	Ենթակառուցվածքներ և սպասարկում	90 971 000
1	Կանաչապատում, բարեկարգում և աղբահանում	15 471 000
2	Ճանապարհներ	39 500 000
3	Ցերեկային յուսավորության ցանցի վերականգնում	17 000 000
4	Մանկական խաղահրապարակներ	5 000 000
5	Նկուղների ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգում	10 000 000
6	Հարթ տանիքների վերանորոգում	4 000 000

2006 թվականին նախատեսվում է զարգացնել 2005 թվականի ձեռքբերումները ի հաշիվ և սեփական եկամուտների կայուն աճի, և աջակիցների հետ համագործակցության խորացման: Սրան զուգահեռ պլանավորված է համայնքային ենթակառուցվածքի հիմնարկների աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում, ինչը իր հերթին կնպաստի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Առանձնակի ուշադրություն կդարձվի ծախսերի հասցեականության մեծացմանը և ըստ առաջնահերթությունների դասակարգմանը:

Այդ նպատակով կատարվել է իրավիճակի վերլուծություն, որը հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացնել խնդիրները, գնահատել հնարավորությունները և կատարել ավելի իրատեսական պլանավորում:

Բ. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ ըստ ոլորտների

1. Համայնք

Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարտ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին գյուղերին: Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ քաղաքամայր Երևանից 17 կմ դեպի հարավ: Մասիս քաղաքը զարգացել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Վաթսունական թվականների վերջերից սկսած՝ քսան տարվա ընթացքում, Մասիսը նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրքի և զարգացած երկաթուղային հանգույցի շնորհիվ ձեռք է բերել հանրապետության խոշորագույն մատակարար քաղաքի կարգավիճակ: 20-30 տարվա ընթացքում քաղաքը ապրել է բուռն զարգացում, սակայն վերջին տարիների ժողովրդագրական ցնցումները և սոցիալ-տնտեսական անկումները քաղաքին առաջադրել են լուրջ հիմնախնդիրներ: Այսուհանդերձ՝ Մասիս քաղաքի բարենպաստ ֆիզիկաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքի, ճանապարհային և երկաթուղային լավ զարգացած ցանցի, գյուղատնտեսության համար բարենպաստ բնական պայմանների, արդյունաբերության համար բավարար մարդկային ու արտադրական ենթակառուցվածքային ռեսուրսների և համայնքային իշխանությունների պատրաստակամության ու պատրաստակամության շնորհիվ կարելի է սպասել բարգավաճման ռեալ հնարավորություններ:

Մասիս քաղաքի՝ որպես առանձին բնակավայրի մասին առաջին հիշատակությունը կապվում է երկաթուղային կիսակայարան Ուլուխանլուի հետ, որը դարասկզբին բնակեցված է եղել մասամբ հայ և ռուս երկաթուղայինների ընտանիքներով, իսկ մեծամասամբ թուրքական կիսաքոչվոր տարրերով: Գյուղի, ապա ավանի կարգավիճակ ունեցող բնակավայրը՝ որպես ինքնուրույն վարչական միավորի շրջկենտրոն, առաջին անգամ հանդես է եկել 1937 թվականի դեկտեմբերի մեկին: Նոր կազմավորված շրջանը, Ջանգիրբասար շրջկենտրոնի անունով, որի բնակչության գերակշիռ մասը կազմել են վերջին հարյուրամյակում ներթափանցած թուրքական տարրերը, կոչվել է Ջանգիրբասարի շրջան: Այն լուծարվել է 1953 թ-ի մարտին, որից հետո բնակավայրը՝ Զրազդան անունով, մաս է կազմել Երևանի Շահումյան շրջանի: 1969 թվականի հունվարի 14-ին Արտաշատի, Էջմիածնի և Երևան քաղաքի Լենինյան ու Շահումյան շրջանների տարածքներից կազմավորվել է նոր՝ Մասիսի շրջան: Նորաստեղծ շրջանի կենտրոն է դարձել վերանվանված Զրազդան ավանը՝ կրելով Մասիս անունը: 1996 թվականի ապրիլին՝ 27 տարվա վաղեմություն ունեցող Մասիսի շրջանը Արարատի և Արտաշատի շրջանների հետ մտավ նոր, ավելի խոշոր վարչատարածքային միավորի մեջ՝ կազմելով Արարատի մարզը:

ՀՀ կառավարության 5.12.1996 թ. որոշմամբ Մասիս ավանը ստացել է քաղաքի կարգավիճակ:

Ժողովրդագրություն

Մասիս քաղաքը հանրապետության խիտ բնակեցված բնակավայրերից է, միջին խտությունը 1 կմ² վրա 1280 մարդ է: Ինչպես ողջ հանրապետությունում՝ բնակչության 99 %-ից ավելին հայեր են, ապրում են նաև եզդիներ և ռուսներ: Մինչև 1946 թվականը Մասիսը բնակեցված է եղել 19-րդ դարավերջին ներթափանցած ադրբեջանցիներով և քրդերով: Հանրապետության այլ շրջաններից և սփյուռքից կատարված լայնածավալ ներգաղթի շնորհիվ տարեցտարի փոխվել է ազգային հարաբերակցությունը, որի արդյունքում 80-ական թվականներին հայերը կազմել են բնակչության 70%-ից ավելին: 1988 -90 թվականների ազգային հեղաբեկումներից հետո, երբ քաղաքից հեռացան ազերիները, և հայրենիք բռնագաղթվեցին մոտ 1890 հայեր, բնակչության ազգային կազմը ստացավ այսօրվա պատկերը: Վերջին հինգ տասնամյակների տարբեր տարիների ընթացքում Մասիս են ներգաղթել Պարսկաստանից (1946-48թթ, 1970-80-ական թթ.), Նախիջևանից (70-ական թթ.), ՀԽՍՀ Շամշադինի, Մարտունու, Սևանի, Սիսիանի, Աբովյանի և այլ շրջաններից: Այս առումով Մասիսն ունի խայտաբղետ ազգագրական համապատկեր:

Մասիս քաղաքը, ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների, ունի 24030 բնակիչ: Մասիս քաղաքի բնակչության 70%-ը վարում է քաղաքային կենցաղ: Քաղաքում ապրում են 5340 ընտանիքներ:

Վերջին տասնամյակում մեծ թափ ստացած արտագաղթը վերջին տարիներին բավականին նվազել է:

Համայնքի բնակչությունը

	Տարիքային խմբեր	Ընդամենը	Տղամարդիկ	Կանայք
1	0-6 տարեկան	2586	1388	1198
2	7-16 տարեկան	4575	2379	2196
3	17-62 տարեկան	13881	6308	7573
4	62 տարեկանից ավելի	2988	1385	1603
5	Ընդհանուր բնակչությունը	24030	11460	12570

Տնային տնտեսություններ

1	Տնային տնտեսությունների ընդհանուր թիվը	5340
2	Միայն մեծահասակներից բաղկացած տնային տնտեսությունների թիվը (62-ից ավելի)	121
3	Կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թիվը	204

Չափափաս բնակչության կրթական մակարդակը

N	Կրթական մակարդակը	Թիվը	Տղամարդիկ	Կանայք
1	Անգրագետներ (Ղպրոց չգնացածներ)	265	100	165
2	Տարրական դպրոց (1-3 դասարաններ)	1848	836	1012
3	Միջին դպրոց (4-8 դասարաններ)	2905	1312	1593
4	Ավագ դպրոց (9-10 դասարաններ)	7570	3650	3920
5	Միջին մասնագիտական	809	424	385
6	Համալսարան	3072	1503	1569

Ձբաղվածություն

N		Ընդ.	Տղամարդ	Կին
1	Համայնքում կամ համայնքից դուրս զբաղվածների թիվը (3, 4, 5 տողերի գումարը)	9811	5158	4653
2	Գործազուրկներ	596	254	342
3	Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածներ	5731	2918	2813
4	Արդյունաբերության ոլորտում զբաղվածներ	1680	1140	540
5	Սպասարկման ոլորտում զբաղվածներ	2400	1100	1300

Բնական պայմանները և շրջակա միջավայրի պահպանությունը:

Մակերևույթը հարթավայրային է, միջին բարձրությունը՝ 800 մետր: Գտնվում է 7-9 բալանոց սեյսմիկ գոտում: Թեև անմիջապես քաղաքի տարածքում չկան հանքային ռեսուրսներ, սակայն մոտակայքում կան մարմարի (Մարմարաշեն), ավազի (Ռանչպար), կավի (Այնթապ) հանքավայրեր: Կլիման չոր ցամաքային է: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս): Հուլիսի միջին ջերմաստիճանը 26-27⁰ C է: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Չմեռը ցուրտ է, անամպ, անհողմ: Հունվարի միջին ջերմաստիճանը -4-ից -6⁰ C է: Հաստատուն ձնածածկույթ ամեն տարի չէ, որ ձևավորվում է: Ընդհանուր Արարատյան դաշտի գոգ բնույթի հետևանքով ձմռանը դիտվում է ջերմաստիճանի շրջադասություն. դաշտում այն լինում է ավելի ցածր, քան շրջակա նախալեռներում: Գարունը կարճատև է: Բնորոշ են անկայուն եղանակները և համեմատաբար առատ տեղումները: Հրաշալի է արևոտ, տևական աշունը: Տարեկան միջին ջերմաստիճանը 8-12⁰C է, առավելագույնը՝ 42⁰ C, նվազագույնը՝ - 30⁰ C, տարեկան միջին տեղումները՝ 300-350 մմ (առավելագույնը՝ ապրիլ-մայիս ամիսներին): Հարևանությամբ են հոսում Հրազդան և Այր լճից սկիզբ առնող Սևջուր գետերը, հարավում՝ պետական սահմանի

երկարությամբ՝ Արաքս գետը, որոնք տարանցիկ են, հորդանում են գարնանը և երբեմն ավերից դուրս գալիս: Քաղաքից հարավ կան արհեստական լճեր: Բնական լանդշաֆտը կիսանապատային է՝ անապատային տեղամասերով: Տիրապետում են բաց շագանակագույն, գորշ, արկալի, տեղ-տեղ աղակալած կիսանապատային հողերը, որոնք, սակայն, աստիճանաբար զիջել են մշակովի հողերին: Բնորոշ բուսատեսակներն են օշինդրը, անթառամը, օջանը, հավամրգին: Կենդանիներից տարածված են սողուններն ու կրծողները: Շատ են թռչունները:

Բնառեսուրսային պոտենցիալը մեծ է: Հողային ռեսուրսները մեծ չեն: Ունի հարուստ ջրային ռեսուրսներ՝ կապված արտեզյան ջրհորների առատության (վրկ. 6-8 մ³) և Հրազդան գետի հետ: Բավարար են կլիմայական ռեսուրսները (լույսի և ջերմության առատություն):

Վերջին տարիներին արտադրական շատ ձեռնարկություններ պարապուրդի են մատնված, և այդ պատճառով մթնոլորտի աղտոտվածությունը չի գերազանցում թույլատրելի նորման: Թեև բնական պայմանները բարենպաստ չեն ծառերի բնական աճի համար, այնուամենայնիվ հատկապես վերջին տարիներին մեծ ուշադրություն է հատկացվում կանաչապատմանը: Ուշադրություն է դարձվում դրենաժների մաքրմանը: Աշխատանքներ են կատարվում քաղաքի հարակից տարածքներում արհեստական ճահճացումներից խուսափելու ուղղությամբ:

Կազմակերպված է քաղաքի աղբահանության խնդիրը, սակայն լուրջ անելիքներ կան քաղաքային աղբանոցի ուղղությամբ:

2. Համայնքապետարան

Համայնքի ինքնակառավարումը

1996 թվականից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են կառավարման նոր եղանակներ՝ տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը: Մասիս քաղաքը մաս է կազմում Արարատի մարզի, որի մարզային կենտրոնն է Արտաշատը: Մարզը կազմում են 93 համայնքներ, որոնցից չորսը՝ Արտաշատը, Մասիսը, Արարատը և Վեդին քաղաքային համայնքներ են: Պետությունը, կառավարության կողմից նշանակված մարզպետի միջոցով, իրականացնում է տարածքային կառավարում: Ժողովուրդը համայնքներում երեք տարի ժամկետով ընտրված համայնքի ավագանիների և ղեկավարների (գյուղապետեր և քաղաքապետեր) միջոցով իրականացնում է տեղական ինքնակառավարում: Մասիս համայնքի բարձրագույն ղեկավար մարմինը 15 հոգուց կազմված ավագանին է, որի՝ իր իրավասության ոլորտում ընդունած որոշումները ենթակա են պարտադիր կատարման: Ավագանու ընդունած որոշումներով և պետության կողմից տրված պարտադիր և պատվիրակված լիազորություններով ու պարտականություններով, նաև կամավոր լիազորություններով համայնքի ղեկավարն իրականացնում է գործադիր իշխանություն: Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի, համայնքային ենթակայության հիմնարկությունների և կազմակերպությունների միջոցով: Մասիս քաղաքի համայնքապետի աշխատակազմն ունի 45 անդամ, որոնք ընդգրկված են Ընդհանուր, Ֆինանսական, Իրավաբանական, Գյուղատնտեսության, Քաղաքաշինության, Կրթության և սպորտի, Մշակույթի և սոցիալառայության, Բնակարանային և կոմունալ տնտեսության, Առևտրի և սպասարկումների, Եկամուտների և ինֆորմացիայի բաժիններում: Աշխատակազմի աշխատանքները կոորդինացնում է քաղաքապետի աշխատակազմի քարտուղարը, իսկ բաժինների աշխատանքը՝ Բաժինների և ծրագրերի համակարգողը: Քաղաքապետի աշխատակազմը լրացնում են 2 փոխքաղաքապետերը, երկու օգնականները և խորհրդականները:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներ.

N	Գործառույթ	Հիմնախնդիրներ (Այո / ոչ)	Հիմնախնդրի /ների/ նկարագրություն
1	Համայնքային զարգացման պլանավորում	Այո	Համայնքային զարգացման պլանները մասամբ մնում են անկատար միջոցների բացակայության պատճառով
2	Շին. օբյեկտությունների տրամադրում	Այո	Դեռևս պատրաստ չէ քաղաքի գլխավոր հատակագիծը:
3	Հանրային ենթակառուցվածքի պահպանություն և զարգացում	Այո	Միջոցների սղություն
4	Համայնքային հողի օգտագործում	Այո	Բավականին անճշտություններ կան քարտեզագրման աշխատանքներում, հողերը խիստ մասնատված են:
5	Ջրամատակարարում	Այո	Անմխիթար վիճակում է ջրամատակարարման ներքաղաքային ցանցը: Բարձր հարկերում ջուր չի լինում: Ջրի որակը շատ վատ է:
6	Կոյուղու ապահովում և պահպանություն	Այո	Վերջին տասնհինգ տարում վերանորոգման ոչ մի աշխատանք չի իրականացվել: Նոր կառուցված թաղամասերում ընդհանրապես գոյություն չունի կոյուղու ցանց:
7	Ոռոգման կառուցվածքների ապահովում և պահպանություն	Այո	Այս ոլորտում ներդրումները չնչին են, հողերը խիստ մասնատված են:
8	Աղբահանություն	Այո	Քաղաքի աղբավայր գտնվում է սանիտարական, էկոլոգիական աններելի պայմաններում:
9	Բնակարանային ֆոնդի պահպանություն և կառավարում	Այո	Բնակարանային ֆոնդի զարգացումը համաչափ չէ բնակչության աճին: Ձգձգվում է համատիրությունների ձևավորումը:
10	Ջերմամատակարարման ծառայություններ	Այո	Ջերմամատակարարման ծառայություններ ընդհանրապես չեն մատուցվում: Լոկալ կաթսայատների տարբերակը քաղաքապետարանի ուժերից վեր է:
11	Ճանապարհի շինարարություն և պահպանություն	Այո	Թեև որոշ աշխատանքներ կատարվում են այս ոլորտում, բայց միջոցները շատ սուղ են հարցը հիմնովին լուծելու համար:
12	Հասարակական տրանսպորտային ծառայությունների ապահովում և կառավարում	Այո	Այս ոլորտը բացառապես պատկանում է մասնավոր հատվածին և տնօրինվում է միայն շուկայական շահի թելադրանքով:
14	Կրթության և մշակույթի ենթակառուցվածքների ապահովում և պահպանում	Այո	Անհրաժեշտ են լուրջ ներդրումներ:
15	Առողջապահության և սպորտի ենթակառուցվածքների ապահովում և	Այո	Առողջապահական հարցերը համայնքային լիազորություններից և հնարավորություններից դուրս են: Սպորտը պահանջում է մեծ

N	Գործառույթ	Հիմնախնդիրներ (Այո / ոչ)	Հիմնախնդրի /ների/ նկարագրություն
	պահպանություն		ներդրումներ:
16	Հարկերի հավաքագրում	Այո	Հարկերի հավաքագրման արդյունավտությունը անմիջականորեն կախված է բնակչության սոցիալական վիճակից:
17	Քաղաքացիական ակտերի գրանցում	Ոչ	-
18	Անասնաբուժական պրոֆիլակտիկայի կազմակերպում	Ոչ	-
19	Աջակցություն գործարար ոլորտին	Այո	Քաղաքապետարանի աջակցությունը բավարար չէ, որովհետև շատ փոքր են հնարավորությունները:

Համայնքի ենթակառուցվածքը ներկայացնում են հետևյալ հիմնարկները.

N	Հիմնարկի անվանումը
1	Մասիսի քաղաքային գրադարան
2	Մասիսի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն
3	Մասիսի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց
4	Մասիսի գեղարվեստի դպրոց
5	Մասիսի մանկապատանեկան մարզադպրոց
6	Մասիսի N 1 մսուր-մանկապարտեզ
7	Մասիսի N 2 մսուր-մանկապարտեզ
8	Մասիսի N 3 մսուր-մանկապարտեզ
9	Մասիսի N 4 մսուր-մանկապարտեզ
10	Մասիսի N 5 մսուր-մանկապարտեզ
11	Մասիսի N7 մսուր-մանկապարտեզ

Համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը

Համայնքի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողը դեռևս չի հանձնվել համայնքին իբրև սեփականություն:

Համայնքի սեփականություն են կազմում 4 վարչական, 6 մանկապարտեզի, 1 գրադարանի, 1 երաժշտական դպրոցի, 1 մարզադպրոցի շենքեր, 2 մարզահրապարակներ, 14 արտեզյան ջրհորներ, 2 ղեկորատիվ լճեր, բնակֆոնդի 2595.2 քմ տարածություն:

3. Համայնքային ենթակառուցվածքներ

Համայնքային ենթակառուցվածքների պահպանումը և զարգացումը ապահովում է Մասիսի քաղաքապետարանի Բնակկոմունալ բաժինը: Բաժնի գործունեությունը ծավալված է 5 ուղղությամբ՝

- ա. Բնակֆոնդի պահպանություն.
- բ. Աղբահանության վերահսկում.
- գ. Բարեկարգում և կանաչապատում.
- դ. Ենթակայության տակ գտնվող հիմնարկների պահպանություն.
- ե. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում.

Մասիս համայնքն ունի քաղաքային և գյուղական թաղամասեր: Քաղաքային թաղամասերում կան 62 բազմաբնակարան շենքեր, որոնք կառուցվել են 70-90-ական թվականներին: Առաջին քաղաքի շենքերը չեն անցել սպասարկման համատիրական ձևի: Տեխնիկական սպասարկումը իրականացնում է «Սիս» ՓԲԸ-ն: Քիչ ավելի հին՝ մոտ 50 տարվա պատմություն ունի 1900 առանձնատների թաղամասը: 90-ականների սկզբին հատկացված տնամերձ հողամասերի հաշվին ձևավորվել են նոր թաղամասեր, որոնց կառուցապատումը դեռևս չի ավարտվել: Բնակարանային խնդիրը բարելավելու նպատակով վերջին անգամ՝ 2002 թվականին աճուրդով բաշխվել է 132 տնամերձ հողակտոր:

Բնակֆոնդի մակերեսը բնակելի շենքերում և ոչ բնակելի շինություններում

	Բնակարանային ֆոնդ	Ընդ. մակ. քմ	Բնակ. մակ. քմ
1.	Բնակֆոնդ ընդամենը, այդ թվում՝	350370	234722
1.1	Բնակելի շենքերում	342090	229075
1.2	Հանրակացարաններում	6480	4647
1.3	Ոչ բնակելի շինություններում	1800	1000
2.	Համայնք. սեփականության բնակ. տար.	2595	1895

Մասիս քաղաքում 1970-90թթ. կառուցվել է 5 հարկանի բազմաբնակարան շենքեր թվով 62 հատ, որոնցից 2-ը Մասիս կայարանում, 18-ը 3-րդ թաղամասում, 40-ը ն/թ-ում և 2-ը 5 –րդ փողոցում: Շենքերի տանիքները իրականացված են հիմնականում ազբոշիֆերով, որոնք երկար տարիներից հետո քայքայվել և շարքից դուրս են եկել՝ մեծ տհաճություններ պատճառելով ազգաբնակչությանը: Անհրաժեշտ է հիմնովին նորոգել տանիքները: Շատ անմխիթար վիճակում են գտնվում շենքերի մուտքերը, չկան պատուհաններ, բացակայում են ապակիները, մուտքերի դռները կիսաքանդ վիճակում են կամ բոլորովին չկան:

Աղբահանություն կատարվում է Մասիս քաղաքի ամբողջ տարածքում , ներառյալ մասնավոր սեկտորը և Մասիս կայարանը: Քաղաքում իրականացվում է փողոցների և մայթերի մաքրման աշխատանքներ, ներառյալ հասարակական վայրերի /շուկա, հրապարակ և այլն/ 280000ք.մ. տարածքով:

Կանաչ գոտիների պահպանման աշխատանքներ են տարվում յուրաքանչյուր տարի 12 հեկտար տարածություն վրա, որից հասարակական օգտագործման կանաչ զանգվածներ, ծառատնկված վայրեր 10,5 հա:

Մասիս քաղաքում ասֆալտապատ ճանապարհները կազմում են 240000 քմ, ոչ ասֆալտապատ ճանապարհների և անցումների մակերեսը կազմում է 180 հազար քմ, որից բարեկարգված մասը կազմում է 120000 քմ, իսկ առանց ծածկույթի կազմում է 60000 քմ:

Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվում են թվով 6 մ/մանկապարտեզ, սպորտդպրոց, կենտրոնական գրադարան, երաժշտական դպրոց և մանկապատանեկան դպրոց: Վերը նշված հիմնարկները կառուցվել են 1970-90-ական թվականներին: Հարկ է նշել, որ քաղաքը չունի մշակույթի տուն:

Բնակֆոնդի պահպանման համար անհրաժեշտ է կատարել բազմաբնակարան շենքերի և նկուղներում գոյություն ունեցող ջրագծերի և կոյուղագծերի նորոգում: Անմխիթար վիճակում է նաև շենքերից դուրս գոյություն ունեցող սնող ջրագծերը և կոյուղագծերը, որոնք կառուցվել են 30-35 տարի առաջ: Քաղաքի ջրագծի ցանցը կազմում է 43 կմ երկարության 100-350 մմ տրամագծի խողովակներից, որոնք անհրաժեշտ է փոխել հիմնովին: 90-ական թթ-ին բնակչությանը բաժանված նոր հողերում ընդհանուր առմամբ բացակայում են կոյուղագծերը և ջրագծերը, պետք է կատարվի նաև Նոր հողեր I – IV թաղամասերի ասֆալտապատում, ջրագծերի և կոյուղագծերի անցկացում և փողոցների լուսավորություն:

Համայնքից այլ համայնքներ կամ մայրուղի տանող ճանապարհներ

N	Ճանապարհի անունը	Ասֆալտապատ (այո/ոչ)	Վիճակը			Երկարությունը /կմ/
			Վատ	Միջին	Լավ	
1	Մասիսից Արտաշատ-Երևան մայրուղի	այո		V		1
2	Մասիսից Երևան-Արտաշատ մայրուղի	այո		V		0.8
3	Մասիս-Էջմիածին	այո	V			14
4	Մասիս-Երևան (Ներքին Չարբախ)	այո			V	7
5	Մասիս-Ռանչպար	այո		V		10

Համայնքի ներքին ճանապարհներ

Փողոցներ (նրբանցքներ)	Վիճակը			Երկարությունը /կմ	Մակերեսը, քմ
	Վատ	Միջին	Լավ		
1. Ասֆալտապատ		√		25	240 000
2. Կոպճապատ	√			10	120 000
3. Գրունտ	√			18	60 000
Ընդամենը՝				53	420 000

Տրանսպորտային ծառայություններ

Տրանսպորտային ծառայությունների վերահսկումն իրականացնում է քաղաքապետարանի Տրանսպորտի և առևտրի սպասարկման բաժինը: Ընդհանուր առմամբ քաղաքի տրանսպորտային վիճակը բավարար է: Գործում են կանոնավոր ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ Երևան, Արտաշատ, Էջմիածին, հարակից գյուղեր երթուղիներով: Փոքր խնդիր կա կապված Երևան-Մասիս-Երևան միկրոավտոբուսային երթուղու հետ: Պիկ ժամերին նկատվում է ուղևորների կուտակումներ կանգառներում: Քաղաքում գործում են տաքսի ծառայություններ մատուցող մեկ տասնյակից ավելի մեծ ու փոքր ընկերություններ:

N	Համայնքի տարածքով անցնող երթուղային տրանսպորտ	Սպասարկող մեքենաների թիվը	Վերջին կանգառ	Վճարը
1	Մարզային նշանակության երթուղային ավտոբուս	5 ավտոբուս, 6 միկ/ավտոբուս	Արտաշատ, Նոր-Խարբերդ, Այնթապ, Ռանչպար, Սիս Ջովտաշատ, Նորամարգ, Նիզամի	100-200 դր
2	Հանրապետական նշանակության երթուղային ավտոբուս*	12 միկ/ավտոբուս, 6 ավտոբուս	Երևան, Էջմիածին	150-200 դր
3	Գնացքներ	3	-	-

* Մասիսի սահմանագծով է անցնում Երևան-(Գորիս-Ստեփանակերտ)-Մեղրի-Թեհրան միջպետական նշանակության մայրուղին:

Էլեկտրամատակարարում

Մասնաճյուղի անվանումը	Բաժանորդների թիվը		Էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը (կվտ.ժ)	
	Ընտանիքներ	Ձեռնարկ. և բյուջետային հիմնարկներ	Ընտանիքներ	Ձեռնարկություններ և բյուջ. հիմնարկներ
ՀԷՑ, «Արաքս» մասնաճյուղ	4598	204	6 879 000	12 240 000

Գազամատակարարում

Գազաֆիկացման աշխատանքները վերջին տարիներին լայն թափ են ստացել: Անհատական տների մոտ 90 %-ը գազաֆիկացված են: Բազմաբնակարան շենքերը նույնպես գազաֆիկացվում են: Քաղաքի 62 բազմաբնակարան շենքերից 36-ում արդեն ավարտվել են աշխատանքները: Հիմնական խնդիրը բնակչության անվճարունակությունն է, սակայն գազը համեմատաբար ավելի էժան վառելիք է, ուստի ցածր եկամուտներ ունեցող ընտանիքները նույնպես ձգտում են գտնել միջոցներ նախնական ներդրում կատարելու համար:

Մատակարար	Ցանցում առկա բաժանորդների թիվը		Տարեկան սպառվող գազի ծավալը (մ ³)	
	Տնային տնտեսություն	Ձեռնարկություններ և բյուջ.հիմն.	Տնային տնտեսություն	Ձեռնարկություններ և բյուջ.հիմն.
«Հայրուսգազարդ» ՓԲԸ Արտաշատի մասնաճյուղ Մասիսի տեղամաս	2 550	56	1 197 600	800 000

Հեռահաղորդակցություն

Կապի միջոցներ	Առկայություն (այո/ոչ)	Օգտվողների թիվը	Կապի որակը			Նշումներ
			Վատ	Միջին	Լավ	
Հեռախոս	Այո	4613		✓		4212 անհատական, 186 բյուջ. հիմնարկ, 215 ձեռն.
Բջջային կապ	Այո	1320	✓			
Ինտերնետ	Այո	500		✓		Գործում են երկու պրովայդեր
Հեռուստատեսություն	Այո	20000			✓	Կա տեղական հեռուստատեսության անհրաժեշտություն
Փոստ	Այո	12000			✓	

Խմելու ջրի մատակարարում և կոյուղի

	Թիվը	Ունակություն (լիտր/վրկ)	Ամսեկան ջրի սպառումը (մ ³)	Կորուստ, %
Խմելու ջրի մատակարարման ցանցին միացված տնային տնտեսությունների թիվը	4350	160-ից ավելի	414 720	60
Կոյուղու ցանցին միացված տնային տնտեսությունների թիվը	4100	X	X	X

4. Տնտեսությունը

Մասիսը մտնում է Արարատի մարզի գյուղատնտեսական գոտու մեջ: Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են բանջարաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բոստանային կուլտուրաների մշակությունը: Կարևոր և կենսական նշանակություն ունեն կարտոֆիլի և հացահատիկի արտադրությունը: Արտադրված գյուղմթերքի մի փոքր մասն է միայն սպառվում ներքին շուկայում: Հիմնական սպառողը Երևան քաղաքի բնակչությունն է: Քաղաքն ունի մասնավորեցված և առայժմ պարապուրդի մատնված պահածոների գործարան: Մինչ այդ կարևոր խնդրի լուծումը մասիսից հողագործը ստիպված է ոչ ձեռնտու պայմաններում մթերքը հասցնել Արարատի, Արտաշատի կամ Արմավիրի վերամշակողներին:

Ներկայիս տնտեսական անկման վիճակում ռեալ գնահատելի չէ Մասիսի տնտեսական պոտենցիալը: Երբեմնի՝ տնտեսական վերելք ապրող քաղաքն այսօր գրեթե կաթվածահար վիճակում է: Առավել խոսուն են փաստերը: 80-ական թվականներին արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էին ավելի քան 5000 բանվորներ և ծառայողներ: Սակայն այժմ արտադրության ծավալները զիջում են ոչ միայն խորհրդային տարիների, այլև մարզի հարևան տարածաշրջանների ներկա ցուցանիշներին:

Վերջին տարիներին միտում է նկատվում արտադրության ծավալների մեծացման: Դա հիմնականում պայմանավորված է մի քանի խոշոր ձեռնարկությունների գործարկումով Մասիսի արդյունաբերական հանգույցում: Դրանք են «Մասիս տաբակ», «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ձեռնարկությունները, «Ալիշան» ՍՊԸ-ն, «Մասիսի գոֆրոտարա» գործարանը և այլն:

Համայնքի համար գերխնդիր է պահածոների գործարանի վերագործարկումը: Այժմ տարածաշրջանում, թեև փոքր չափերով, գործուն է սննդամթերքի (չրեր, հյութեր, երշիկեղեն, հացաբուլկեղեն), շինանյութերի (սալիկներ, փայտյա և մետաղապլաստե շինանյութեր, գերեզմանաքարեր) արտադրություն:

Գյուղատնտեսություն

Ունենալով բնակլիմայական պայմանների և աշխարհագրական դիրքի նպաստավորություն, մարդկային ռեսուրսների հարստություն գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացման համար՝ Մասիսն ապահովված է գյուղատնտեսական զարգացման պոտենցիալով:

Համայնքի հողօգտագործում

N	Հողօգտագործում	Ընդ հա	Որից՝					Մաս ճավ որ (հա)
			Կմառ I	Կմառ II	Կմառ III	Կմառ IV	Կմառ V	
1	Ընդամենը հողատարածքներ	1874	x	x	x	x	x	x
2	Գյուղատնտեսական նշ. հողեր	807		30	108	84	583	470
2.1	- վարելահողեր	596		30	83	80	403	390
2.2	- բազմամյա տնկարկներ	40						40
2.2.1	խաղողի այգիներ	37			25	4	8	37
2.2.2	մրգատու այգիներ	3					3	3
2.3	- խոտհարքներ	21					21	
2.4	- արոտավայրեր	150					150	
3	Բնակավայր	386	x	x	x	x	x	x
4	Արդյունաբերական/ընդերքօգտագործման/ արտադրական նշանակության	343	x	x	x	x	x	x
5	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների	91	x	x	x	x	x	x
6	Հատուկ պահպանվող տարածքներ	11	x	x	x	x	x	x
7	Հատուկ նշանակության	2	x	x	x	x	x	x
8	Զրային	22	x	x	x	x	x	x
9	Պահուստային հողեր	212	x	x	x	x	x	x

Անձակ գյուղատնտեսական հողեր

N	Ընդամենը (հա)
---	---------------

1	Ընդհանուր անմշակ հողերը (1.1-ից 1.3 տողերի գումարը)	34,0
1.1	Աղակալած կամ ջրածածկ հողեր	5
1.2	Տիրագուրկ կամ անտերության մատնված հողեր	15,0
1.3	Ոչ ոք չի ցանկանում վարձակալել	14,0

Ոռոգում

	Հողօգտագործում	Ընդամենը (հա)	Ոռոգվող (հա)
1	- Ցանքատարածություններ	596	596
2	- Պտղատու այգիներ	3	3
3	- Խաղողի այգիներ	37	37
4	Այլ: Խոտհարքներ	21	21

Համայնքում առկա «ոչ ֆերմերային» ձեռնարկությունների թիվը և տեսակը

N	Տեսակը	Թիվը	Ձեռնարկությունների հիմնական գործունեությունը	Զբաղված համայնքի անդամների թիվը
1	Գյուղատնտեսական մթերքների վերամշակող ձեռնարկ.-ներ	2	գյուղ. մթերքների վերամշակում	60
2	Արդյունաբերության ոլորտ	25	թեթև արդյունաբերություն	1200
3	Ծառայությունների և մատակարարման ոլորտ	205	հասարակական սպասարկում	1860

Արդյունաբերություն

Խնդիրներից զերծ չէ նաև արդյունաբերության ոլորտը: Թեև վերջին տարիներին աճել են արտադրական ցուցանիշները, այնուամենայնիվ զարգացման ընթացքը բավարար չէ: Արտադրական ձեռնարկությունները ունեն նույն կամ նմանատիպ խնդիրներ՝ ֆինանսական սուղ վիճակ, ինֆորմացիայի պակաս, սահմանափակ շուկա, որակյալ մասնագետների ու նոր տեխնոլոգիաների կարիք: Փոքր ու միջին բիզնեսի զարգացման նպատակով անհրաժեշտ է ստեղծել տեղեկատվական-խորհրդատվական կենտրոններ և վարկավորման մատչելի ու արտոնյալ մեխանիզմներ, հզորացնել ՓՄՁ ասոցիացիաները: Քանի որ քաղաքի տնային տնտեսությունների 69.6 %-ը զբաղվում է գյուղմթերքների արտադրությամբ, կարելի է խիստ կարևորել վերամշակող ձեռնարկությունների դերը: Ներդրումների ներգրավմամբ անհրաժեշտ է խթանել գործող ձեռնարկությունների հզորությունը և մրցակցային դաշտի ապահովման նպատակով ստեղծել նոր փոքր ու միջին հզորության վերամշակող ձեռնարկություններ:

Արդյունաբերության զարգացման հիմնական ռազմավարությունը պետք է լինի աջակցությունը արդյունաբերական քլաստերների զարգացմանը: Մեկը մյուսին օժանդակող ու լրացնող արտադրական ճյուղերը պետք է միտված լինեն մի հիմնական նպատակի. թողարկել վերջնական և ցանկացած շուկայում մրցունակ արտադրանք:

5. Կրթություն, մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն, առողջապահություն.

Մասիսը հարուստ և վաղեմի պատմություն չունի: Աղքատ է պատմա-մշակութային կոթողներով: Արագ, «արհեստականորեն» աճած քաղաքում կառուցվել են հիմնականում տիպային կառույցներ՝ զրկելով յուրահատուկ ճարտարապետական կառույցների գեղեցկությունից: Այնուամենայնիվ վերջին հիսունամյակի ընթացքում կառուցվել են հուշարձաններ, որոնք բավարար մեկնարկ կարող են լինել առաջիկա և հետագա արարումների համար:

Պատկերավոր ասած՝ Մասիս քաղաքի ամենագեղեցիկ և ամենահին պատմամշակութային ու ճարտարապետական կոթողը Մասիս և Արագած սարերի անկրկնելի բնապատկերն է, որոնց հայացքների ներքո դեռ շատ անելիք ունի մարդը: Սակայն մարդն այստեղ ապրել է դեռևս անհիշելի ժամանակներից: Մասիս քաղաքից 3 կմ հյուսիս, Նորաբաց գյուղի մոտակայքում պեղվել է մ. թ. ա. IV-V հազարամյակի բնակատեղի, որտեղ և հայտնաբերվել են նեոլիթի դարաշրջանին բնորոշ քարե գործիքներ, կավե ու խեցե ամանեղենների մնացորդներ: Հնության շունչ են հաղորդում Մասիսի քաղաքային գերեզմանոցում տեղադրված 15-րդ դարի 3 խաչքարերը, որոնք 1989 թվականին տեղափոխվել են Նախիջևանի տարածքից: Մասիսի Կենտրոնական հրապարակին հարող տարածքում վեր է խոյացած Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանախումբը, որն ունի ճարտարապետական մոնումենտալ արժեք: Վերջին տասնամյակի դարաբաղյան պատերազմի զոհերի սուրբ հիշատակն է վառ պահում Կենտրոնական հրապարակի հուշադբյուրը: Հիշատակելի են «Կյանքի արարում», «Արևի ժամացույց», «Խոյեր» քանդակները:

Մասիս քաղաքը չունի եկեղեցի, որի բացակայությունն է նաև պատճառ աղանդների բարգավաճման: Հույս է ներշնչում Կենտրոնական հրապարակին հարող տարածքում զգված և օծված եկեղեցու հիմքը, որի կառուցումն արդեն ձեռնարկել է «Վարդանյանների ընտանիք» բարեգործական հիմնադրամը:

Բարի համբավ ունեն Մասիսի՝ տարածքային նշանակություն ունեցող հիվանդանոցային համալիրը, պոլիկլինիկան, սանէպիդկայանը, Հանրապետական մանկական օրթոպեդիայի հիվանդանոցը: Առողջապահության համապետական և համազգային խնդիրներին համայնքը առնչվում է մասնակիորեն, երբ անհրաժեշտություն է լինում օգնել գերատեսչական ենթակայության առողջապահական հիմնարկներին: Համագործակցության լավագույն օրինակ է մալարիայի դեմ պայքարը, որի բռնկման և տարածման օջախ է երբեմն հանդիսանում Մասիսը:

Մասիս քաղաքն ունի վեց մսուր-մանկապարտեզներ, վեց միջնակարգ դպրոցներ, Գյուղատնտեսական պետական քոլեջ: Քաղաքում և տարածաշրջանի բնակավայրերում հեղինակություն են վայելում Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցը, Գեղարվեստի դպրոցը: Անմխիթար է «Մշակույթի կենտրոն»-ի վիճակը. այն տեղավորված է ընդամենը մեկ-երկու սենյակում: Արդեն մի քանի տարի է չի գործում «Մասիս» կինոթատրոնը: Աշխուժություն է դրսևորում մանկապատանեկան մարզադպրոցը, ուր մարզվում են շուրջ 374 մարզիկներ՝ 10-ը մարզածներով, սակայն մարզագույքի պակասը զգալ է տալիս:

Քաղաքի մսուր-մանկապարտեզները տեղավորված են տիպային շենքերում: Ի տարբերություն հանրապետության և Արարատի մարզի մսուր-մանկապարտեզների գերակշիռ մեծամասնության, որոնք չեն գործում, կան գործում են 6 ամիս ժամանակով՝ Մասիսի քաղաքային համայնքի 6 մսուր մանկապարտեզները գործում են շուրջտարի: Մանկապարտեզի ծախսերը հիմնականում կատարում է քաղաքապետարանը: Մանկապարտեզները շենքային հնարավորությունների առումով աշխատում են թերբեռնված՝ 50 և ավել տոկոսի չափով, բացառությամբ թթ 3 և 4 մանկապարտեզների, որոնք գործում են 60-70% ծանրաբեռնվածությամբ: Մանկապարտեզների օգտագործվող և չօգտագործվող մակերեսները կարիք ունեն վերանորոգման, մասնակիորեն՝ նաև գույքի: Չնայած կատարվել են մասնակի վերանորոգումներ (թիվ 3 մանկապարտեզ), սակայն դրանք բավարար չեն: Չօգտագործվող մակերեսների օգտագործման դեպքում անհրաժեշտ է կատարել հիմնական վերանորոգում: Մասնակիորեն վերանորոգվել են սանհանգույցները, կոյուղիները, խմելու ջրի խողովակները, սակայն բոլոր մանկապարտեզներում էլ դրանք հիմնական նորոգման առաջնահերթ կարիք ունեն:

Քաղաքում կա նախադպրոցական հասակի 1548 երեխա, որոնցից մանկապարտեզ են հաճախում 454-ը՝ շուրջ մեկ երորրդ մասը: Մանկապարտեզների թերօժանրաբեռնվածության պատճառները բազմազան են, որոնցից կարելի է առանձնացնել՝

ա. Բնակչության ցածր զբաղվածությունը.

բ. Սոցիալական ոչ բավարար մակարդակը (անվճարունակությունը)

գ. Մտուր-մանկապարտեզների գործունեության վերաբերյալ լրատվության պակասը:

Այս խնդիրների աստիճանական լուծման հետ, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը զուգընթաց սպասվում է առաջիկա 2-3 տարիների ընթացքում երեխաների հաճախելիության մեծացում մ/մանկապարտեզներում: Այսօր այդ միտումը նկատելի է բոլոր մանկապարտեզներում: Քաղաքում երեխաների ծնունդը ավելանում է տարեցտարի՝ օրինակ 2002թ՝ 213, 2004թ՝329, 2005թ՝ 265 առ նոյեմբերի 1-ը, ուստի առաջիկա 2-3 տարիների առումով անհրաժեշտություն կա նախապատրաստական աշխատանքներ տանել և պատրաստ լինել աստիճանաբար բոլոր դիմող երեխաներին ընդգրկելու մանկապարտեզներում: Խնդիր կա նաև մանկավարժների վերապատրաստման հետ, որոնք երկար տարիներ վերապատրաստում չեն անցել:

Կարելի է ասել լիարժեքորեն հագեցած չէ Մասիս քաղաքի մշակութային միջավայրը: Հիմնական խնդիրն այն է , որ քաղաքում չկա մշակույթի տուն, թատրոն կամ գործող կինոթատրոն: Բացը մասնակիորեն լրացնում են Երաժշտական դպրոցը և Գեղարվեստի դպրոցը: Սակայն և դրանք , և մյուս մշակութային հիմնարկները՝ ՄՊՍԿ, Գրադարան, ևս ունեն լուրջ և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ:

Կրթական օջախներ

	Քանոթ	Մովսես Կեղևանյանի օջախ	Վերջնականորեն օջախ	Բարձրագույն միջնակարգ դպրոցների օջախ	Միջին վերջնական դպրոցների օջախ	Նշումներ
Մանկապարտեզներ	6	454	32	6	այո	հիմնական միջոցների և գույքի մաշվածություն, ցածր աշխատավարձ, մասնագետների վերապատրաստում
Միջնակարգ դպրոցներ	6	3400	214	185	այո	
Պետական գյուղատնտ. քոլեջ	1	381	36	36	ոչ	

Արտադպրոցական հիմնարկներ, մշակույթ և սպորտ

	Քանոց	Քանակությունները միլի	Աշխատակազմի թիվը	Բարձրագույն կրթությամբ աշխատակիցների թիվը	Շենքերի վիճակը՝ վարանորոգման կարիք ունեցող (այո/ոչ)	Նշումներ
Գեղարվեստի դպրոց	1	34	10	1	ոչ	Նորոգման, գույքի անհրաժեշտություն
Մարզադպրոց	1	322	22	3	ոչ	
Երաժշտական դպրոց	1	256	41	6	այո	
Գրադարան	1	1500	24	6	ոչ	
Ստադիոն	1	200	5	1	այո	
Սպորտային ակումբ	1	196	8	3	այո	

6. Արտաքին կապեր, համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները

Մասիս քաղաքը վարչական, տնտեսական, աշխատանքային և մշակութային անուր կապերով կապված է հանրապետության այլ տարածաշրջանների հետ: Վարչական կապերի հիերարխիան սկսվում է գյուղերից, ընդգրկում տարածաշրջանային կենտրոն Մասիսը և մարզկենտրոն Արտաշատի միջոցով ավարտվում Երևանում:

Տնտեսաարտադրական կապերը դուրս են գալիս ներքին տարածաշրջանային նշանակության սահմաններից և ունեն համապետական նշանակություն: Աշխատանքային կապերը ներքին տարածաշրջանային առումով ուղղահայաց են, իսկ արտաքին առումով՝ կարելի է ասել՝ հորիզոնական: Տարածաշրջանի գյուղական բնակավայրերի աշխատուժը միտված է դեպի Մասիս քաղաք, ուր անհամեմատ մեծ թիվ են կազմում սպասարկման, կրթական և արտադրական ոլորտների հիմնարկ-ծեղնարկությունները: Մասիս քաղաքից ավտոբուսային և միկրոավտոբուսային մշտական երթուղիներ են գործում դեպի Երևանի կենտրոն և Հարավ-արևմտյան թաղամասեր, դեպի Արտաշատ, Էջմիածին, ԼՂՀ-ի Ստեփանակերտ, Վրաստանի Ախալքալակ, ՌԴ-ի Մինսկի, Ռոստով քաղաքներ: Մասիսի տարածաշրջանով է անցնում Երևան-Մեղրի ավտոմայրուղին, որով գործող բոլոր երթուղիներից հեշտությամբ օգտվում է Մասիսի բնակչությունը: Մասիսը կարևորագույն երկաթուղային հանգույց է: Մասիս քաղաքով են անցնում Երևան-Մասիս-Գյումրի-Այրում-Թբիլիսի, Երևան-Մասիս-Արարատ երկաթուղային երթուղիները, որոնք ապահովում են Մասիսի տնտեսական և կենցաղային արտաքին կապերի կենսունակությունը: Հիմք ընդունելով Մասիս քաղաքի տնտեսաաշխարհագրական դիրքի նպաստավորությունը՝ իրատեսական է կանխատեսել, որ առաջիկա տարիների ընթացքում մեծ աշխուժություն և արդյունավետություն կունենան արտաքին կապերը բոլոր չափանիշներով: Ձարգանում են միջպետական հարաբերությունները Իրանի հետ, որի հետ կապի ցամաքային գործող և հեռանկարային միջոցները չեն կարող շրջանցել Մասիսի տարածաշրջանը: Կրկնակի առավելություն է դառնում Երևան քաղաքին մոտ լինելը, և նախկինից մնացած խոշոր բազաների առկայությունը, որով կարելի է լիովին վերականգնել մատակարարող տարածաշրջանի երբեմնի հեղինակությունը:

Լրացուցիչ առավելություն է տարբեր տարիներին Իրանից հայրենադարձվածների բազմաճանաչ ներկայությունը, որը կապահովի մարդկային ռեսուրսների հարստության լեզվական, անձնական կապերի և իրազեկության գործուն ցուցիչներ:

Գ. Մարտահրավերներ

Իրավիճակի գնահատումը ի ցույց է դնում խնդիրների մի ողջ սպեկտր, որոնց անտեսումը տարեցտարի կարող է ավելի ու ավելի դժվարացնել լուծումները: Թեև իրատեսական չի լինի ասել, թե բացահայտված և արձանագրված բոլոր խնդիրները հնարավոր է շուտափույթ հաղթահարել կամ հաղթահարել միայն համայնքի ուժերով, այնուամենայնիվ դրանց վերլուծումը և դասակարգումը հնարավորություն է տալիս ավելի ճիշտ պլանավորել առաջիկա տարիների անելիքները, որոնել և գտնել թե ներքին, թե արտաքին հնարավորություններ: Լուրջ խնդիրների թվում են՝

1. Գործազրկության մակարդակ.
2. Խմելու ջրի ներհամայնքային ցանցի համատարած վթարայնություն.
3. Բնակֆոնդի «ծերացում».
4. Գյուղմթերքների արտադրության էքստենսիվություն և իրացման դժվարություններ.
5. Համայնքային ենթակայության հիմնարկների շենքային պայմաններ.
6. Երիտասարդության աշխատանքային և ժամանցային պարապուրդ.
7. Կանաչ զանգվածի աղքատություն.
8. Մշակութային և ֆիզիկական-առողջապահական զարգացման խնդիրներ.
9. Ինֆորմացիոն վակուում կապված ՁԼՄ-ների բացակայության հետ.

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներ

	Խոչընդոտներ	Բոլորովին կարևոր չէ				Կարևոր է			Շատ կարևոր է			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	
1	Գործազրկություն											
2	Մաքուր խմելու ջրի վատ հասանելիություն											
3	Ճանապարհային ցանցի վատ որակ											
4	Առողջապահական ծառայությունների վատ հասանելիություն											
5	Բարձրորակ ընդհանուր կրթության վատ հասանելիություն											
6	Միջն. մասնագիտական կրթության կամ վերապատրաստման հասանելիություն											
7	Վատ բնակարանային պայմաններ											
8	Ոռոգման վատ հասանելիություն											
9	Գյուղատնտեսական արտադրանքի վատ մարքեթինգ											
10	Ջերմամատակարարում											
11	Բնական աղետներ											
12	Տեղեկատվության վատ հասանելիություն											
13	Աշխատանքի ցածր վարձատրություն											
14	Մանր ու միջին բիզնեսի աջակցության անբավարարություն											

Դ. Հնարավորություններ

Բազում խնդիրներով հանդերձ՝ Մասիս քաղաքը բարենպաստ ֆիզիկաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքի, ճանապարհային և երկաթուղային լավ զարգացած ցանցի, գյուղատնտեսության համար բարենպաստ բնական պայմանների, արդյունաբերության համար բավարար մարդկային ու արտադրական ենթակառուցվածքային ռեսուրսների և համայնքային իշխանությունների պատրաստակամության ու պատրաստակամության շնորհիվ ունի բարգավաճման ռեալ հնարավորություններ:

1. Տնտեսաաշխարհագրական բարենպաստ դիրք.
2. Մասնագիտական հմտություններով աշխատուժի հարստություն.
3. Արտաքին կապերի զարգացածություն.
4. Կրթական պոտենցիալ.
5. Արտադրական ենթակառուցվածքների ցանցի զարգացածություն.
6. Ջրային ռեսուրսների հարստություն.
7. Վեգետացիոն շրջանի երկարատևություն.
8. Վերագործարկման պատրաստ արտադրական ձեռնարկությունների քանակ.

Ռազմավարական հիմնահարցեր, նպատակներ, երկարաժամկետ խնդիրներ

1. Կրթության և սպորտի բաժին

Երկարաժամկետ խնդիրները կազմված են երեք տարի ժամկետով

Առաքելություն

Կրթության և սպորտի ոլորտների արդյունավետ կազմակերպմամբ բարձրացնել նախադպրոցական կրթության որակը և նպաստել սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացմանը համայնքում:

1.1 Նախադպրոցական կրթություն և դաստիարակություն

Հիմնահարցեր

1. Թույլ շենքային և գույքային բազա
2. Այլընտրանքային ծառայությունների բացակայություն
3. Առկա իրավիճակի պահպանման անհրաժեշտություն

Նպատակ

Նպաստել նախադպրոցական ոլորտի ծառայությունների որակի բարձրացմանը՝ պահպանելով մատուցվող ծառայությունների քանակը և մատչելիությունը:

Երկարաժամկետ խնդիրներ

1. Բարձրացնել նախադպրոցական հիմնարկների 10 դաստիարակների որակավորումը:
2. Ավելացնել ուսուցողական խմբակների թիվը 6 մանկապարտեզներում /օտար լեզու և պար/:
3. Վերանորոգել թիվ 2, 3, 6 մանկապարտեզների շենքերը:
4. 1 երեխայի սննդաբաժնին հատկացվող գումարը ավելացնել 10%-ով: Ավելացնել գործող բոլոր մանկապարտեզների գույքային բազան /100 սրբիչ, 100 կոմպլեկտ սպիտակեղեն, խաղալիքներ, դիդակտիկ նյութեր, 2 հեռուստացույց/:
5. 100 կոմպլեկտ սպիտակեղեն, խաղալիքներ, դիդակտիկ նյութեր, 2 հեռուստացույց/:
6. Նախադպրոցական կրթության ոլորտում պահպանել մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

1.2 Մարզադպրոց

Հիմնահարցեր

1. Թույլ գույքային և նյութական բազա
2. Առկա իրավիճակի պահպանման անհրաժեշտություն

Նպատակ

Բարձրացնել երիտասարդների ֆիզիկական դաստիարակության որակը , կազմակերպել սպորտային միջոցառումներ և մրցաշարեր՝ պահպանելով առկա իրավիճակը:
Երկարաժամկետ խնդիրներ

7. Ապահովել մարզական հագուստներով (100 մարզիկի համար) և մարզական գույքով (10 հատ ֆուտբոլի գնդակ, 10 հատ վոլեյբոլի գնդակ, 10 հատ բասկետբոլի գնդակ, 10 հատ շախմատի տախտակ և ժամացույց, 50 քմ մրցագորգ, 10 հատ մարզասարք):
8. Տարվա ընթացքում մասնակցել հանրապետական նշանակության 10 մրցաշարերի և առաջնությունների:
9. Ըստ տարեկան մարզական արդյունքների՝ կազմակերպել քաղաքի 10 լավագույն մարզիկների խրախուսման և այլ մարզական միջոցառումներ:
10. Սպորտի ոլորտում պահպանել մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

1.3 Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն

Հիմնահարցեր

1. Թույլ գույքային բազա
2. Շատ թույլ շենքային բազա
3. Առկա իրավիճակի պահպանման անհրաժեշտություն

Նպատակ

Նպաստել արտադպրոցական դաստիարակության որակի բարձրացմանը՝ պահպանելով մատուցվող ծառայությունների քանակը և մատչելիությունը:

Երկարաժամկետ խնդիրներ

11. Վերանորոգել ՄՊՍԿ-ի շենքը:
12. ՄՊՍԿ-ի 5 աշխատակիցների համար ապահովել վերապատրաստման հնարավորություն:
13. Հարստացնել ՄՊՍԿ-ի գույքային բազան /պարի և թատերական խմբակների համար հագուստ 50 միավոր, 1 դաշնամուր, 100 աթոռ, 10 սեղան, 5 պահարան, 1 տեսախցիկ, 1 երաժշտական կենտրոն, 1 համակարգիչ և տպիչ սարք/:
14. Արտադարձրացական կրթության ոլորտում պահպանել մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

**Պատասխանատու՝
Կրթության և սպորտի բաժնի պետ՝**

Ռ. Եղիազարյան

2. Մշակույթի և սոցիալական հարցերի բաժին

Երկարաժամկետ խնդիրները կազմված են երեք տարի ժամկետով

Առաքելություն

Բարելավել համայնքի մշակութային միջավայրը, նպաստել սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական հիմնախնդիրների լուծմանը.

2.1 Մշակույթի ոլորտ

Հիմնահարցեր

1. Մշակույթի կենտրոնի շենքի բացակայություն
2. Թույլ գույքային բազա
3. Բացօթյա մասսայական միջոցառումների կազմակերպման դժվարություններ
4. Առկա իրավիճակի պահպանման անհրաժեշտություն.

Նպատակ

Բարելավել բնակչությանը մատուցվող մշակութային ծառայությունների որակը:

Երկարաժամկետ խնդիրներ

15. Կառուցել Մշակույթի կենտրոն 500 տեղանոց դահլիճով:
